

« 30 » 04 2011

№ 1.9 - 746

Տարեկան Ֆինանսական հաշվետվությանը կից բանկի ֆինանսական վերլուծություն

Կոնվերս բանկ ՓԲԸ-ի ղեկավարությունը ներկայացնում է Բանկի 2010թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները: 2010թ-ը ֆինանսական համակարգի համար կարելի է բնորոշել որպես կայունացման տարի, որի արդյունքում Բանկի տարեկան զուտ շահույթը կազմեց 1,432 մլն դրամ, մինչդեռ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում արձանագրվել էր 1,026 մլն դրամի վնաս: Կայունացմանը նպաստեց վարկավորման գործընթացի առավել արդյունավետ կազմակերպումն ու վարկառուների հետևողական մոնիտորինգը: Վերջինս հնարավորություն տվեց տարվա ընթացքում զերծ մնալ նոր խոշոր վարկերի դասակարգումից և ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ նախկինում խնդրահարույց դարձած վարկերի վերադարձման ուղղությամբ:

2010 թվականին արձանագրվել է Բանկի ակտիվների և պարտավորությունների զգալի աճ: Հաշվետու ժամանակաշրջանում Բանկի ընդհանուր ակտիվներն աճել են 12.6%-ով և տարեվերջին կազմել 88.5 մլրդ դրամ:

Վարկային ներդրումներն աճել են 4.8%-ով և կազմել 43.1 մլրդ դրամ:

2010թ. ընթացքում Բանկի պարտավորություններն աճել են 8.4%-ով՝ կազմելով 71.9 մլրդ դրամ: Հաճախորդներից ներգրաված ավանդները հաշվետու տարվա ընթացքում աճել են 3.6%-ով՝ տարեվերջին կազմելով 58.5 մլրդ դրամ: Վերջինս կազմում է պարտավորությունների ավելի քան 81.2%-ը, որը հիմնականում պայմանավորված է մատուցվող որակյալ ծառայություններով և ճկուն սակագնային քաղաքականությամբ:

Բանկի ընդհանուր կապիտալը հաշվետու ժամանակաշրջանում աճել է ավելի քան 34.9%-ով և կազմել է 16.6 մլրդ դրամ՝ հիմնականում պայմանավորված կանոնադրական կապիտալի 3.6 մլրդ դրամ աճով:

Բանկը գործունեություն է իրականացնում ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում, ուստի Բանկի գործունեության վրա իրենց ուրույն ազդեցությունն են թողնում թե հայրենական, և թե միջազգային տնտեսություններում տեղի ունեցող իրադարձությունները:

2010 թվականին էական ազդեցություն են ունեցել մասնավորապես տեղական և միջազգային շուկաներում տեղի ունեցող տոկոսադրույքների տատանումները, որի բացասական ազդեցությունը չեզոքացնելու համար Բանկը ողջ տարվա ընթացքում իրականացրել է ակտիվների և պարտավորությունների փոխհամաձայնեցված կառավարում:

Բանկի գործունեությանը բնորոշ հիմնական ռիսկերի, նրանց գնահատման գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև ռիսկերի կառավարման Բանկի կողմից կիրառվող քաղաքականությունը բացահայտված է սույն ֆինանսական հաշվետվություններին կից ներկայացվող “Ռիսկի կառավարում” թիվ 35 ծանոթագրությունում:

Բանկի բաժնետերերը և ղեկավարությունը որդեգրել են Բանկի գործունեության բարելավման և ընդլայնման ուղին՝ մասնավորապես, նախատեսվում է առաջիկա երեք տարիների ընթացքում ընդլայնել մասնաճյուղերի ցանցը, մեծացնել կանխիկացման և սպասարկման կետերի քանակը, որը նպաստելու է Բանկի՝ հաճախորդների հնարավորինս լայն շերտերին բանկային ծառայություններ մատուցելուն ուղղված քաղաքականությանը:

Խորհրդի նախագահ

Խորհրդի անդամներ



Արմեն Տեր-Տաճատյան

Ջուան Պաբլո Գեչիդջյան

Արսեն Գամաղեյան